



Տեսակին

«Չոհ» Խաղալու Զերթական Չաւեշտը



«Լերան քարոզը» Ժան Պրուդէլ տը Էլտըր (1598)

Նիկոլ Փաշինեանը շաբաթ մը առաջ Զայաստանի Ազգային Ժողովի ամաիոնէն չքմեղանքի հին-նոր ճառ մը արտասանեց, միշտ նոյն՝ իրեն յատուկ ժողովրդայնականութեան ոճով: Այս անգամ դարձեալ Փաշինեան գրաւոր ձեւով եւ բարեպաշտ ու «զոհ» խաղցող «խեղճ»ի կերպարով հանդէս եկաւ:

Ս. Չատկուայ տօնին սեմին, Փաշինեան իր «խոստովանանքը» համեմատ Էր մեր Տէր Յիսուս Զրիստոսի 9 երանիներէն մեկուն՝ խաղաղարարներուն ուղղուած երանութեամբ:

Այս ձեւով Փաշինեան փորձեց ինքզինք արդարացնել, իբր թէ յանուն խաղաղութեան իր կատարած ու կատարելիք գիշումներուն ու Զայրենիքի հանդէպ կատարած մեղանշումներուն հանդէպ:

Մեր կրօնական համեստ գիտելիքներով սակայն, գիտենք թէ «Խաղաղութեան իշխանին»՝ խաղաղարարներուն ուղղած երանութիւնը երբեք չի նշանակեր թշնամիին, չարին յանձնուի: Նիկոլական մեկնաբանութիւնը ճշմարտութիւնը կ'աղաւաղէ:

Մենք լաւ գիտենք, որ Աստուածաշունչի 9 երանիներէն Է Նաեւ հետեւեալը՝ «Երանի՛ անոնց, որոնք կը հալածուին արդարութեան համար, որովհետեւ անոնցն Է երկինքի արքայութիւնը» (Մատթեոս 5:10):

Աւելին, նոյն Աստուածաշունչին (Առակաց 23:10)ն կ'ըսէ. «Մի՛ փոխեր հին սահմաններու նշանները»...:

Փաշինեանին կը մնայ յաջորդին աւելի եւս ուսումնասիրել Աւետարանը եւ կամ ընտրովի ու այլանդակուած ձեւով չօգտագործել անոր խօսքերը:

Վերջապէս, կարելի է որոշ մարդոց խաբել երբեմն, սակայն կարելի չէ բոլոր մարդոց խաբել միշտ:

Մեր հայրենիքին վերաբերող Տիեզերական Արդարութեան դատաստանը շատ մօտ Է եւ վայ անոնց, որոնք կ'անտեսեն զայն:

ՍԵԽԱԿ ՅԱԿՈԲԵԱՆ

Լիբանանեան Լուրեր

Լիբանանի Նախընտրական Թոհուրոհին Չուգահեռ

Մինչ նախընտրական հաւաքներն ու մրցակցութիւնը կը շարունակուի, Լիբանանի մէջ կ'արձանագրուին ապահովական միջադէպեր:

Դեղագործուի Լայլա Ռըզքի սպանութեան դէպքը մեծ ցնցում առաջացուցած է երկրին մէջ:

Կը նշուի, որ 3 զաւակներու մայր Լայլա Ռըզք երկու օր առաջ անարգ ոճիրի մը զոհ դարձած էր լեռնալիբանանի Մըրուփ գիւղին մէջ գտնուող իր տնօրինած դեղարանին մէջ: Աւելի ուշ պարզ դարձած է, որ դեղագործուին մորթուած գտնուած է դեղարանին բաղնիքին մէջ:

Ըստ ներքին գործոց նախարար Պասսամ Մաուլաույի ոճիրը չէ եղած գողութեան նպատակով:

Յիշեցնենք, որ վերջին երկու տարիներուն ընթացքին Լիբանանի մէջ մեծապէս սկսած են աճ գրանցել քրեական յանցագործութիւնները եւ այդ մասին ալ հանդէս եկած է երկրի ՆԳ նախարարութիւնը:

Միւս կողմէ, Լիբանանցի բժիշկ՝ Ռիշար Խարրաթ ճիշդ 20 օր առաջ ձերբակալուած էր Ապու Տապիի մէջ:

Մինչ Լիբանանի իրաւապահ մարմիններ լռութիւն կը պահեն Խարրաթի խնդրով, Լիբանանցի արթիւկութներ եւ ընկերային տարբեր հարթակներու վրայ անոր ազատութիւնը պահանջող նախաձեռնութիւններու դիմած են:

Զայական Լուրեր

Անկախ Մամուլի Կողմանէ Զայաստան Նահանջ Կ'արձանագրէ

Freedom House-ը հրապարակած է իր «Nations in Transit 2022» տարեկան զեկոյցը, որուն մէջ անդրադարձ կայ Նաեւ Զայաստանին:

Իրաւապաշտպան կազմակերպութեան զեկոյցին մէջ կը նշուի, որ 2004 թուականէն սկսեալ Նախապէս մենատիրական երեք երկիրներ՝ Մոլտովան, Զոսովոն եւ Զայաստանը, քայլերու ձեռնարկած են ժողովրդավարութեան ամրապնդման ուղղութեամբ, որոնք արդիւնքով դարձած են հիպոթետիկ վարչակարգեր:

Զայաստանը, ըստ Freedom House-ի զեկոյցին, ընդհանուր ցուցանիշով յառաջընթաց գրանցած է՝ հնարաւոր առաւելագոյն 7 միաւորէն, որ աւելի ժողովրդավար երկրի ցուցանիշն է, ստանալով 3.04 միաւոր Նախորդ տարուայ 2.96 միաւորի փոխարէն: Զայաստանը յառաջընթաց գրանցած է զեկոյցին կողմէ հետազօտուող մի քանի ոլորտներում մէջ, ներառեալ ժողովրդավարական կառավարումը, ընտրական գործընթացը եւ դատաիրաւական համակարգի զարգացումն ու անկախութիւնը՝ միեւնոյն ժամանակ Նահանջելով անկախ մամուլի ցուցանիշին մէջ:

Տոկոսային ցուցանիշով երկրի ժողովրդավարութեան զարգացման մակարդակը կը կազմէ 34%: Ըստ Freedom House-ի՝ այն երկիրները, որոնք անցում կատարած են մենատիրական կառավարման ձեւէն հիպոթետիկ աւելի խոստումնալից են, թէեւ ամբողջապէս «տակաւին չեն համապատասխաներ ժողովրդավարական չափանիշներուն»:

Իրաւապաշտպան կազմակերպութիւնը կը նկատէ, որ, օրինակ, Զայաստանի մէջ «2018 թուականին քաղաքացիները օգտագործեցին բողոքի շարժումը եւ մրցակցային ընտրութիւններու շարքը, որոնցմէ վերջինը կայացաւ 2021-ին՝ վճռականօրէն վերջ դնելով «Զանրապետական» կուսակցութեան բազմամեայ կառավարման: Այդ ժամանակուայ առաջնորդները փոխարինուեցան քաղաքական գործիչներու նոր սերունդով, որոնք, չնայած նկատելի թերութիւններու, հիմնականին մէջ յանձնառութիւն ունին դէպի ժողովրդավարութիւն եւ հանրային շահ»:

Զայաստանը, ըստ զեկոյցին, յետխորհրդային երկիրներէն կը զիջի միայն Ռըքրանիոյ, Վրաստանին ու Մոլտովային, իր ետին թողելով Կեդրոնական Ասիոյ հանրապետութիւնները, Պելառուսիան, Ռուսաստանն ու Ատրաքեյճանը:

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ու ՀԲԸՄ Նախագահը Քննարկած են Արցախի Շուրջ Ստահոգիչ Չարգացումները



Ապրիլ 18-ին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինի մեջ հիւրընկալեց Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության նախագահ տիար Պերծ Սեդրակեանը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը եւ ՀԲԸՄ Նախագահը անդրադարձան հայրենական եւ ազգային կեանքի մեջ առկա մարտահրավերներուն եւ անոնց յաղթահարման ուղղուած Հայոց Եկեղեցւոյ եւ տարբեր ազգային հաստատութիւններու կողմէ ձեռնարկուող կրթական, ընկերային եւ զարգացման ծրագրերուն:

Զրոյցին ընթացքին խօսուեցաւ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի եւ ՀԲԸՄ երկարամեայ համագործակցութեան մասին, որ արդիւնաւորուած է բազում ազգագույն եւ եկեղեցաշէն ծրագրերով: Այս առիթով Վեհափառ Հայրապետը իր օրհնութիւնն ու բարեմաղթանքները բերաւ ՀԲԸՄ Նախագահ Պերծ Սեդրակեանին՝ բարձրօրէն գնահատելով Միութեան կողմէ դրսեւորուող ոգին ու գիտակցութիւնը եւ Մայր Աթոռին ու Հայոց Եկեղեցւոյ աշխարհասփիւռ թեմերուն ցուցաբերուող շարունակական զօրակցութիւնը:

Ազգի առջեւ ծառացած արդի խնդիրներուն յանդիման՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսը եւ ՀԲԸՄ Նախագահը յատկապէս կարեւոր համարեցին երիտասարդ սերունդի կրթութեան ու հայեցի դաստիարակութեան, ազգային ինքնութեան պահպանութեան

ու ազգային ոգիի զօրացման ուղղուած ծրագրերու խթանումը: Մասնաւոր անդրադարձ եղաւ Արցախի շուրջ մտահոգիչ զարգացումներուն, Արցախի ազատ ու անկախ կեանքի դէմ ունեցուած քիւսակներուն եւ արցախցիներու կեանքին մեջ առկա դժուարութիւններուն: Ընդգծուեցաւ անհրաժեշտութիւնը համազգային հետեւողական ջանքերու գործադրման ի նպաստ Արցախի մեր ժողովուրդի իրաւունքներու պաշտպանութեան եւ խնդիրներու յաղթահարման:

Հանդիպման ընթացքին՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ու ՀԲԸՄ Նախագահը արծարծեցին շարք մը հարցեր, որոնք կը վերաբերէին սփիւռքի համայնքային կեանքին, ձեւաւորուող նոր համայնքներուն, հայապահպանութեան խնդիրներուն, ինչպէս նաեւ երիտասարդութեան ազգային եւ հոգեւոր պատշաճ խնամատարութեան եւ սփիւռքի ազգային կառոյցներու եւ հաստատութիւններու զօրացման կարեւորութեան: Կարեւոր նկատուեցաւ սփիւռքի ներուժի գնահատումը եւ համակարգուած ծառայեցումը աշխարհասփիւռ համայնքներու ազգային կեանքի աշխուժացման եւ հայրենական կեանքի յառաջընթացին ու բարօրութեան: Զննարկուեցան հնարաւոր ուղիները, որոնցմով եկեղեցին եւ ՀԲԸՄ կրնան սփիւռքն ու յատկապէս երիտասարդութիւնը ներգրաւել հայրենիքի հզօրացման ուղղուած ծրագրերուն եւ նախաձեռնութիւններուն մէջ:

Բամ բաս բայ

Հայ քաղաքական կուսակցութիւն մը երբէկ կազմակերպած էր Նախընտրական հաւաք մը Լիբանանի երեսփոխանական ընտրութիւններու շեմին:



Հաւաքին ընթացքին, տուեալ կուսակցութեան առաջնորդը, որ նաեւ խորհրդարանի անդամակցութեան թեկնածու է, խօսք առած է, որուն մէջ մէջ տեղ գտած անհանդուրժողականութիւնը հանդէպ այլ Հայ մրցակից թեկնածուներուն, յար ու նման էր նոյն թեմայով, Հայկական կրօնական նուիրապետական աթոռի մը գահակալին, քանի մը օր առաջ արտայայտած միտքերուն: «Չար» լեզուներ կ'ըսեն թէ, խօսքերը համակարգուած ալ էին:

Խնդիրը սակայն կը կայանայ այն բանին մէջ, որ մինչ քաղաքական կուսակցութեան մը առաջնորդին ընտրապայքարի ճառին մէջ տեղ գտած անհանդուրժողականական եւ մաղձոտ արտայայտութիւնները իր մրցակիցին նկատմամբ, կարելի է կերպով մը արդարացնել ընտրապայքարի յատուկ նորմերուն կապելով, ինչպէ՛ս կարելի է հասկնալ կրօնապետի մը իր իսկ հօտին ոչ կուսակցական զաւակներուն հանդէպ անհանդուրժողականութիւն ցուցաբերող միտքերը: Վեհափառին կարծիքով, համայնքի հաստատութիւններէն դուրս գործող հայորդիներ իրաւունք չունին համայնքը ներկայացնելու: Խօսք, որ արտասանուած է խաղաղութեան ու հանդուրժողականութեան իշխան՝ Յիսուս Զրիստոսի Ս. Յարութեան տօնին հետ զուգահեյտող օրերուն:

Այս երեւոյթը, որքանո՞վ յարիր է, նոյն ինքն՝ եկեղեցիին քարոզած Աւետարանին՝ «Բարի Հովիւ»ի կերպարին կամ «Անառակ որդի»ի առակին: Առաջինի պարագային, Բարի Հովիւը, իր ամբողջ հօտը ետին ձգած, գնաց կորսուած գառնուկը գտնելու, իսկ երկրորդին մէջ, Հայրը՝ իր տունէն հեռացած զաւակը, գրկաբաց տուն ընդունեց...:



Պատմութեան Մէջ Այսօր

Ռաֆայէլ Երիսթավի


Ռաֆայէլ Երիսթավի (նաեւ՝ Արակվիս Երիսթավի, Երիսթով-Արակվսքի, 9 (21) Ապրիլ, 1824, Չալա գիւղ, Կախէթի մարզ, Վրաստան, Ռուսիոյ կայսրութիւն - 19 Փետրուար (4 Մարտ) 1901, Թելաւ), վրացի բանաստեղծ, թարգմանիչ, ազգագրագետ ու բանահիւսագետ: Սերած է իշխանական տոհմէ: Ռաֆայէլ Երիսթավի, ծնած է 9 (21) ապրիլ 1824-ին Կախէթի Չալա գիւղին մէջ: Սորված է Թիֆլիսի մէջ՝ ազնուականներու երեխաներու համար նախատեսուած

դպրոցի մը մէջ եւ զայն աւարտած է 1845 թուականին: 1846 թուականին սկսած է աշխատիլ որպէս քաղաքացիական ծառայող: Ամուսնացած է Ֆեոդոսյա Երիսթովա-Գուրիյսկի հետ (1845-1891): Ռաֆայէլ Երիսթավիի բանաստեղծութիւնները առաջին անգամ տպագրուած են 1854 թուականին: Գրած է բանաստեղծութիւններ, պատմուածքներ, բիւսներ ու ազգագրագիտական թեմաներով յօդուածներ: «Տերգդալեուելքի» խմբակի գրողներին ազդեցութեամբ 1860-ական թուականներուն սկսած է գրել քաղաքական թեմաներով բանաստեղծութիւններ: Սակայն անոր ստեղծագործութիւններու հիմնական թեման եղած է գիւղացիութեան կեանքը:

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Վեհափառ Հայրապետին եւ Հոգեւոր Տիրոջ Միջեւ Հանդիպում Անթիլիասի Մայրավանքին Մէջ

Երեքշաբթի, 19 Ապրիլ 2022-ին, Ռաֆայէլ Պետրոս ԻԱ. Հոգեւոր Տէրը այցելեց Արամ Ա. Վեհափառ Հայրապետին: Երկու հոգեւոր պետերը աւելի քան ժամ մը հանդիպում ունեցան: Հանդիպումին ներկայ էին օգնական եպիսկոպոս Պէյրուքի թեմին Արի. Տ. Գեորգ Եպս. Ասատուրեան, Լիբանանի թեմի առաջնորդ Գերշ. Տ. Շահէ Արք. Փանոսեան, միջ-եկեղեցական յարաբերութեանց յանձնախումբի ատենապետ Գերշ. Տ. Նարեկ



Արք. Ալեմեգեան եւ Չալքայի Ս. Խաչ եկեղեցւոյ ժողովրդապետ Հ. Սեպուհ Վրդ. Կարապետեան: Հանդիպումը առիթ հանդիսացաւ ընկերակցելու Լիբանանի, Սփիւռքի եւ Հայաստանի կապուած այժմեական հարցեր:

Ամերիկեան Բարքեր

ԳԵՈՐԳ ԲԵՕՇԿԵՐԵԱՆ
«Զարթոնք»ի Երեց Աշխատակից

Կամենալը՝ Կարենալ Է...

Կրնա՞ք երեւակայել որ կոյր պարմանուհի մը՝ պասքէթպոլի գնդակը նետել եւ ճշգրտօրէն զամբիւղին մէջ զետեղէ: Այս դէպքը պատահած է Միշիկըն նահանգի Չիլդրն քաղաքին մէջ:

Արդարեւ 17 ամեայ Զոկլէնտի առիթ տուած են՝ իրենց դպրոցի պասքէթպոլի խաղի աւարտին, որ գնդակը նետել զամբիւղին մէջ: Անոր առաջին փորձը ձախողած է, սակայն երբ երկրորդ փորձը յաջողած է՝ մարզասրահը թնդացած է 2,500 հանդիսատեսներու ծափերով եւ ուրախութեան աղաղակներով: Բայց ի՞նչ է ասոր գաղտնիքը: Հիմա թոյլ տուէք որ բացատրեմ:



Զոկլէնտ (տես նկարը) երեք տարեկանին կորսնցուցած է իր տեսողութիւնը, սակայն իր կուրուքիւնը երբեք պատճառ չէ հանդիսացած՝ որ ան գրկուի իր սիրած բաներէն:

Ուրեմն վերոյիշեալ խումբի մարզիչը՝ երկար ծողով մը կը զարնէ զամբիւղին, որպէսզի կոյր պարմանուհին անոր ծայնով առաջնորդուի եւ գիտնայ զամբիւղին

վայրը: Այսպէսով կ'ապահովուի յաղթանակը:

Արեւմտեան քաղաքակիրթ երկիրները կը քաջալերեն անկարները որ մասնակցին իրենց սիրած մարզական խաղերուն: Այսպէս՝ ամէն չորս տարին անգամ մը տեղի կ'ունենայ ողիմպիական խաղեր, անկարներու համար:

Երբ այս դէպքին մասին կը խորհրդածէի, միտքս ինկաւ բանաստեղծին հետեւեալ տողերը, որ առնչութիւն ունի մեր պատմութեան հետ:

Աշխատանք, կամք ու կորով՝
Երեք ձիրքեր են որով,
Մարդ՝ երկնի վրայ թէ երկրի,
Անպայման կը յաջողի:

Յաջողութիւնը՝ որեւէ գործի մէջ, կամքի եւ յարատեւ աշխատանքի արդիւնք է: Հիմա խօսինք օրինակներով:

Իտալացի նշանաւոր երգիչ Անտրէա Պուչչիի 12 տարեկանին բոլորովին կուրացած է, սակայն անոր կուրուքիւնը երբեք արգելք չէ հանդիսացած որ ան իր ծայնով գրաւէ աշխարհի ուշադրութիւնը եւ յաջողի իր ասպարեզին մէջ: Ամերիկացի նշանաւոր հեղինակ Յէլէն Բէլլը 19 ամսուան մանկիկ մը եղած ժամանակ՝ թէ կորսնցուցած է իր տեսողութիւնը եւ թէ ալ իր լսողութիւնը: Սակայն այս բոլորը պատճառ չեն հանդիսացած որ ան իր հրատարակած գիրքերով դառնայ նշանաւոր:

Ուրեմն եզրակացնելով՝ կրկնեմ թէ «Կամենալը, Կարենալ Է»:

Հայ մը՝ Անջրպետի Մէջ...

Ինչո՞ւ չէ: Եթէ հայ մը՝ յանձնու Լիբանանահայ Դոկտ. Արտէմ Փաթափութեանի (տես նկարը) անցեալ տարի Նոպէեան մրցանակի արժանացաւ՝ բնախօսութեան եւ բժշկութեան ոլորտին մէջ, ուրիշ հայ մըն ալ կրնայ մօտիկ ապագային անջրպետ երթալ, բայց ոչ թէ որպէս աստղանաւոր՝ այլ որպէս աստղանաւորներու վիրաբոյժ բժիշկ:



Խօսքս Տոքթ. Հայկ Այնթապեանի (տես նկարը) մասին է: Ան որպէս բժիշկ վկայուած է Արիզոնայի նահանգային համալսարանէն, իսկ այժմ որպէս շտապ օգնութեան բժիշկ՝ իր մասնագիտութիւնը կ'ստանայ Զայիֆորնիոյ Լոս Անճելեսի համալսարանի բժշկութեան բաժանմունքին մէջ:

Տոքթ. Այնթապեան առաջին բժիշկն է որ ընտրուած է մասնակցելու անջրպետային բժշկութեան ծրագրին, որ պիտի պատրաստէ վիրաբոյժներ՝ ճամբորդելու անջրպետ, աստղանաւորներու հետ միատեղ: 5-10 տարիներու ընթացքին, այս ծրագիրը պիտի իրականանայ եւ օգտագործուի դէպի Հրատ մոլորակը ճամբորդող՝ զբօսաշրջիկներու բժշկական խնամքին համար...

Վերոյիշեալ ծրագրի պատրաստութիւնը կ'ենթադրէ մասնակցիլ խիստ

Մանկութեանս Մէկ Չատիկը. Զ՞Է Որ Աստուած Վերմակին Տակն Ալ Կը Տեսնէ...

ԱՆՈՅՇ ՆԱԳԱՇԵԱՆ



Որո՞նք էին մեր մանկութեան ուրախութիւնները...

Երբ աշխարհն այսքան փոքրացած չէր, ճամբորդութիւնները այսքան դիւրին չէին, օդանաւներու տոմսակներու գիները մրցումի չէին ելած իրենց աւելի աժան ըլլալու գովազդներով՝ մենք աւելի կ'արժեւորէինք տօները, մենք աւելի անհամբեր կը սպասէինք Ծնունդին եւ Չատիկին, որովհետեւ Ծնունդն ու Չատիկը իրենց հետ կը բերէին նոր հագուստ, նոր կօշիկ, Կաղանդի Ծառ, Կարմիր Հաւկիթ... Մայր, մեծ մայր, հօրաքոյր, մօրաքոյր, դուռ-դրացի կը հաւաքուէին խմորեղէններ պատրաստելու համար: Իւրաքանչիւր տօն ոչ միայն իր անուշեղէնը ուներ, այլեւ իր անուշութիւնը...

Եւ անշուշտ անպայման իւրաքանչիւր պատմութիւն մը, յուշ մը ունինք... Մարլէնին հետ ոչ միայն դրացիներ էինք այլեւ ընկերուհիներ: Առտունները միասին դպրոց կ'երթայինք՝ միասին ալ կը դառնայինք: Ինձմէ երկու տարի մեծ ըլլալով՝ երկու տարի ալ բարձր դասարան էր:

Տարի մը Չատիկի պահքը չսկսած՝ Մարլէնը շատ լուրջ հարցուց ինձի.

-Պահք պիտի բռնե՞ս:

-Այսի՞նքն...

-Այսինքն ո՛չ միս պիտի ուտես, ոչ հաւ, ոչ ձուկ, ոչ շոքոլա, ոչ քէյք, ոչ աս, ոչ ան...

-Այսի՞նքն...

-Այսինքն ինչ բան որ կենդանիէ կու գայ՝ պիտի չուտենք:

-Իսկ ի՞նչ պիտի ուտենք...

-Չէթուն, գա՛ղար, դդում, սմբուկ, լոլիկ, վարունգ, սոխ, սխտոր:

-Մեր տունը սոխ-սխտոր չի մտներ, պապաս անհանգիստ կ'ըլլայ:

-Լաւ հիմա հասկցար ինչ պիտի ուտես: Մամայիդ բան չըսես, ես ալ չեմ ըսեր, որովհետեւ կ'ըսեն, որ պզտիկ ենք տակաւին...

-Բայց ինչո՞ւ պիտի ըսենք ասիկա:

-Միտքս բան մը կայ, եթէ պահք բռնենք կը կատարուի:

Օ՞հ, բայց... ինչո՞ւ չէ մտածեցի, ընկերուհիիս սիրոյն պահք կը բռնենք քառասուն օր: Ինչպէս մերժէի, տասնմէկ տարեկան էի եւ չէի ուզեր ընկերութիւնս քանդուի: Բայց Մարլէնը ուրկէ բերաւ այս պատմութիւնը... Անկեղծ ըլլալու համար, մէկ-երկու օր մօրս բան չըսի, ես արդէն այնքան սակաւակեր էի, որ պահք բռնելս չէր ալ նկատուեր... Բայց շոքոլայէն գրկուիլը՝ շատ ծանր պահք էր:

Վերջապէս երրորդ օրը մօրս հարցուցի, թէ ի՞նչ է պահքը:

-Այդ քու տարիքիդ համար չէ: Ձեր աճելու, մեծնալու ժամանակն է եւ դուն սնունդի պէտք ունիս: Բայց ուրիշ առաջարկ մը ունիմ քեզի, պահքի շրջանին ամէն չորեքշաբթի եւ ուրբաթ աւելի կանուխ պիտի արթննաս եւ հետո արեւագայի գաս:

Քանի որ մօրս ըսած էի արդէն պահքին մասին՝ իր առաջարկն ալ չէի կրնար մերժել, աւելի կանուխ կ'արթննայի, դպրոցի պայուսակս ալ առած կ'երթայինք եկեղեցի եւ ես ճամբաս կը շարունակէի դպրոց: Մէկ-երկու անգամ Մարլէնն ալ միացաւ: Մէկ-երկու անգամ ալ քնացայ եկեղեցիին մէջ...

Շաբ. Էջ 05

մասնագիտական դասընթացներու, հետեւեալ կազմակերպութեանց կողմէ՝ Space X օդատիեզերական ընկերութեան, Jet Propulsion Laboratory անջրպետային գիտութեանց եւ UCLA կենսաքիմիական ճարտարագիտութեան:

Յուսամ հայագգի վերոյիշեալ գիտնականներու ձեռք ձգած յաջողութիւնները խթան կը հանդիսանան այլ հայերու եւս՝ որպէսզի անոնք ալ ձգտին հասնիլ իրենց երազներու իրականացման: Պատիւս՝ արժանաւորաց:

Մշակութային Արձագանգ

Միտքերու հտաղում

ԺԱՄԱՆԱԿ-ի բազմամեայ սինակագիր, Պատրիարքական Աթոռի հոգեւորականաց դասու երիցագոյն անդամներէն Ս. Մաշտոց Զինյ. Գալիաքճեանի յօդուածներէն բաղկացեալ ժողովածու մը Ս. Չատկի տօնին ընդառաջ գրասեր հասարակութեան տրամադրութեան տակ դրուած է: «Կեանքը որ կ'ապրինք» վերնագրեալ՝ հեղինակի յօդուածներու այս հատընտիրը Թրքահայ ուսուցչաց հիմնարկի եւ ԺԱՄԱՆԱԿ օրաթերթի համատեղ հրատարակութիւնը կը հանդիսանայ: Հաստատուող հատորը կազմած ու խմբագրած է մեր աշխատակից Վարանդ Զորթմուսեան: Գիրքի սկիզբին Թուրքիոյ Հայոց Պատրիարք Ամեն. Ս. Սահակ Ս. Արք. Մաշալեանի Օրհնութեան գիրը գետնդրուած է: Սկզբնամասին կան նաեւ Թրքահայ ուսուցչաց հիմնարկի վարչութեան պատգամը եւ ԺԱՄԱՆԱԿ-ի խմբագրութեան խօսքը, որ գրի առնուած է թերթիս գլխաւոր խմբագիր Արա Գօչունեանի կողմէ: Հեղինակ տէր հայրը այս հրատարակութիւնը պատեհ առիթ համարած է ոգեկոչելու համար իր բարեյիշատակ հայրը՝ լուսահոգի Գրիգոր Գալիաքճեանը, որ եւս ԺԱՄԱՆԱԿ-ի ընտանիքին մաս կազմած է:

«Կեանքը որ կ'ապրինք»ի հրատարակութիւնը իրականացած է մեկենասութեամբ՝ տքթ. Խաչիկ Միսաք եւ Իրմա (Լոքմակեօգեան) Թաթարեան ամուսինները: Մեկենասները այս գիրքը ձօնած են իրենց յոյժ սիրեցեալ ծնողաց՝ հոգեւոր Ս. Ատոկմ Զահանայ եւ երեցկին ողբացեալ Արփինէ Թաթարեանի եւ հանգուցեալ Չարեհ եւ Մելինէ Լոքմակեօգեաններու քաղցր յիշատակին:

Վարանդ Զորթմուսեան գիրքի սկիզբին ամփոփ ձեւով ներկայացուցած է բովանդակութեան առանձնայատկութիւնները: Ծոխ բովանդակութիւնը կը բաղկանայ տասնմէկ գլուխէ: Առաջին տասն բաժինները կ'ընդգրկեն Ս. Մաշտոց Զինյ. Գալիաքճեանի կողմէ ստորագրուած շուրջ 150 յօդուած՝ դասաւորուած ըստ նիւթերուն: Իւրաքանչիւր գլուխ տարանջատուած է գեղարուեստական բնոյթով գունատիպ լուսանկարով մը, ինչ որ կը համալրէ ընթերցողի պատկերացումը: Գիրքի վերջին գլուխը հեղինակին՝ Ս. Մաշտոց Զինյ. Գալիաքճեանի հետ կատարուած անտիպ հարցազրոյցի մը ամբողջական սղագրութենէն կը բաղկանայ: Այսպէս, երբ

ԺԱՄԱՆԱԿ-ի դարադարձը 2008 թուականէն սկսեալ նշուած էր շուրջ հինգ տարիներու վրայ տարածուած բազմակողմանի ծրագրով մը, յոբելեանը արժեւորելու համար պատրաստուած էր «ԺԱՄԱՆԱԿ-ի ժամանակը» փաստաւարագրական ժապաւենը: Բացառիկ նշանակութեամբ այդ գործը արտադրուած էր Երեւանի «Վերսուս սթուտիա»ին կողմէ: Այդ նախագծին համար ԺԱՄԱՆԱԿ-ի խմբագրատան պատշգամին վրայ Ս. Մաշտոց Զինյ. Գալիաքճեանի հետ կատարուած էր հարցազրոյց մը, որմէ միայն սահմանափակ հատուածներ օգտագործուած էին եւ որոնք ամբողջը ցայսօր մնացած էր անտիպ: «Կեանքը որ կ'ապրինք» գիրքը առիթ հանդիսացաւ, որպէսզի թուղթին յանձնուի այդ անտիպ տեսագրութեան ամբողջական սղագրութիւնը: Հարկ է նշել, որ այդ հարցազրոյցը կատարուած էր Հայաստանէն յայտնի մտաւորական Տիգրան Պասկեւիչեանի կողմէ:

«Կեանքը որ կ'ապրինք» հատորին մէջ ընթերցողը կը գտնէ Ս. Մաշտոց Զինյ. Գալիաքճեանի գրչին արգասիքը բազմաթիւ գրութիւններ գանազան նիւթերու. ինչպէս՝ Սուրբ Գիրքի, կրօնաբարոյական, եկեղեցագիտական, Մեծ պահքի կիրակիներուն եւ Աւագ շաբթուան, տօներու, ԺԱՄԱՆԱԿ օրաթերթի, մշակոյթի, լուսահոգի երեցկին Աննիկ Գալիաքճեանի, թրքահայ համայնքին եւ գանազան անձնաւորութիւններու մասին: Ընթերցողը թերթատելով այս հատորին էջերը՝ հաղորդակից կը դառնայ հեղինակ քահանայ հօր հոգեմտաւոր ապրումներուն, մշակութային եւ համայնքային հարցերուն նկատմամբ մօտեցումին եւ, ինչպէս հատորին վերնագիրը կը յուշէ, ընթերցողը այս գիրքին միջոցով առիթ կ'ունենայ վերանայելու՝ ի՞ր իսկ կեանքը, մեր կեանքը, որ կ'ապրինք: Նորատիպ ժողովածոյին մաս կազմած յօդուածները առհասարակ հրատարակուած են ԺԱՄԱՆԱԿ օրաթերթին մէջ: Գիրքի կողքը պատրաստուած է լուսանկարիչ Տաթև Դուրեանի կողմէ նկարահանուած դրուագով մը: Կողքի եւ ընդհանուր գեղարուեստական ձեւաւորման խորհրդատուն եղած է Կեօքչէն Էրկիւլէն:

Ս. Մաշտոց Զինյ. Գալիաքճեանի «Կեանքը որ կ'ապրինք»ը կարելի է ապահովել Թրքահայ ուսուցչաց



հիմնարկէն եւ ԺԱՄԱՆԱԿ-ի խմբագրատունէն:

«Ժամանակ»/Պոլիս

*

ՇՆՈՐՀԱԿԱԼԻԲ

ԺԱՄԱՆԱԿ օրաթերթին մէջ լոյս տեսած յօդուածներուս այս ժողովածոյի հրատարակութիւնը կը համարեմ լուսահոգի հօրս՝ յաւետողբացեալ Գրիգոր Գալիաքճեանի ոգեկոչման համար եզակի առիթ մը:

Այս առթիւ ամենախորին ակնածանքով երախտագիտութիւն կը յայտնեմ՝

ԹՈՒՐԷՈՅ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐԷ ԱՄԵՆ. Ս. ՍԱՀԱԿ Ս. ԱՐԷ.

ՄԱՇԱԼԵԱՆԻ

որ բարի եղած է Օրհնութեան գիր մը շնորհել:

Անկեղծ շնորհակալութիւններ կը յայտնեմ գիրքի մեկենաս ազնուաշուք Տէր եւ Տիկին տքթ. Խաչիկ եւ Իրմա Թաթարեանին, որ այս հատորը ձօնած է հոգեւոր Ս. Ատոկմ Զինյ. Թաթարեանի բարի յիշատակին: Այս առթիւ նուաստս եւս կ'օրհնէ վախճանեալ տէր հօր



յիշատակը: Տէրը լուսաւորէ իր ազնիւ հոգին:

Խորագրած շնորհակալութիւններ կը յայտնեմ Թրքահայ ուսուցչաց հիմնարկի պատուարժան վարչութեան, որ այս հրատարակութեան մտայղացումը ունեցած է եւ ամենայն հաստատականութեամբ հետամուտ եղած՝ համապատասխան ծրագրի ի կատար ածուելուն:

Անսահման շնորհակալութիւն իմ այնքան սիրելի եւ հարազատ ԺԱՄԱՆԱԿ-ի ընտանիքին: Արդարեւ, թերթիս պատուարժան խմբագրութիւնը ամենայն բծախնդրութեամբ ի գլուխ հանած է անհրաժեշտ պատրաստութիւնները: Մասնաւոր շնորհակալութիւն կը յայտնեմ երիտասարդ գրչեղբօրս՝ սիրելի Վարանդ (Յակոբ) Զորթմուսեանին, որ բարեխիղճ ու տքնաջան աշխատանքով կազմած է ու խմբագրած այս հատորը:

Տէրը վարձահատոյց ըլլայ բոլորին:

ՄԱՇՏՈՑ ԶԱՀԱՆԱՅ ԳԱԼՓԱՔՃԵԱՆ

Մեր Կորուստները

Ոչ եւս է Վահան Իշխանեան

Խոր ցաւով վերահասու եղանք, թէ Հայաստանի մտաւորականութեան կարկառուն ներկայացուցիչներէն Վահան Իշխանեան կնքած է իր մահկանացուն: Երեւանեան աղբիւրները հաղորդեցին, որ իր կողակիցը՝ բնաստեղծուի Վիոլէթ Գրիգորեան տեղեկացուցած է, որ 58 տարեկան հասակին կեանքէ հեռացած է հրապարակագիր Վահան Իշխանեան:

Բազմաթիւ տպագիր կամ առցանց լրատուամիջոցներու աշխատակցած, խմբագրի կամ թղթակիցի



պաշտօններ վարած Վահան Իշխանեան հեղինակած էր նաեւ բազմաթիւ գործեր:

Տեօրթեուլցի Պենոն Վասիլեանի Յուշերը Չորք Մերճուման-Չորք Մարգալան

Շար. նախորդ թիւէն

Ես այս խօսքերը լսեցի, ես ինծի ըսի՝ «աս ալ ինծմէ աւելի խենթ կ'երեւայ, բայց ի՞նչ ընեմ եղբայրս Է, չեմ ձգեր: Նայինք ի՞նչ պիտի ըլլայ»: Սիրանուշ քոյրիկիս խօսքերը իմ միտքս խառնիխառն ըրին: Սկսայ մտածել՝ հոս զինք չեն յարգեր, քեռայրիս Մեսրոպին նեղացուցեր է, ան ալ զինք վռնտեր է, հիմա ես իրեն ետ տանիմ հետս՝ արդեօ՞ք քեռայրս ինծմէ կը նեղուի՝ «աս խենթը ինչու՞ հետդ բերիր» ըսելով... այսպէս կը մտածեի, վերջաւորութեան՝ «ի՞նչ կ'ուզէ թող ըլլայ» ըսի: Երեք օր Պէյրութ մնացինք, հազար ֆրանք ալ հոն ծախսեցինք ելանք եկանք Հայէպ: Հայէպի կառատունը իջնելուս՝ հաճի Սինանեանը տեսայ: Սինանեանը Հայէպէն Իսկէնտէրուն գիծի վրայ օթոքարով ճամփորդներ կը տանի-կը բերէ: Իրեն ըսի՝

- Հաճի, մենք ալ Իսկէնտէրուն կ'ուզենք երթալ, տեղ կ'ըլլա՞յ մեզի համար:
- Պենոն, տեղ չըլլայ իսկ՝ կը տանիմ ձեզի, թէ ոչ քեռայրիդ Մեսրոպին ձեռքէն չեմ ազատիր:
Յաջորդ առաւօտ նստանք օթոքար հասանք Իսկէնտէրուն:
- Ուղղակի կ'երթաս Մեսրոպ փաշային քով: Եթէ իրմէ առաջ ուրիշ տեղ երթաս՝ քեռայրդ կը նեղուի քեզմէ, որովհետեւ ինքը մեծ քեռայրդ է,- ըսաւ հաճին:
- Արդէն մենք հոն կ'երթանք, ինքը մեզի համար պապայի տեղ է:- Թաղապետը՝ Իգնատիոսին տղան, Յակոբը մեր Փանօղլու քեռիին ձիակառքին վրայ կ'աշխատի եղեր: Հաճին զայն կանչեց, ըսաւ,- ա՛ռ աս եւրոպացին, Մեսրոպ փաշային քով տար, *պախշիշ* կու տայ:
Նստանք ձիակառք, գացինք-հասանք քեռայրիս տունը: Մեզի տեսան հեռուէն՝ եղբայրս Շահանը անմիջապէս ճանչցեր էն, բայց սա քովի եւրոպացին ո՞վ է՝ ըսեր էն: Զալեցինք մօտեցանք, ես անհամբեր քրոջս փաթթուեցայ, քեռայրս կաղալով եկաւ-հասաւ՝ «Հայկունի, ադ ո՞վ է քեզի փաթթուած Է այդպէս» ըսաւ: Զոյրս ալ՝

- Ի՞նչ է, միշտ դու՛ն պիտի փաթթուիս ինծի, ուրիշներ ալ կան կարօտով մնացած են:
- Չըլլա՞յ Պենոնն Է:
- Հապա ո՞վ ինծի կրնայ փաթթուիլ եղբայրես գատ, Մեսրոպ,- ըսաւ քոյրս:
Շուտով քեռայրս ոչխար մը բերաւ մորթեց, զիս հարսի նման վրայէն անցընել տուաւ, տուն մտանք: «Բարի եկար, անցած ըլլայ, փառք Աստուծոյ որ նորէն մեզ իրարու միացուց» ըսին: Կնքահայրս եկաւ, Չարուհի քոյրս եւ Տիգրան քեռայրս եկան, ուլիկ մը բերին մորթեցին:

- Ու՛ր ես ինծի անծանօթ քեռայրս՝ Մարկոսը եւ քոյրս Բերկրուհին:
- Սովոր օլուք էն, անոնց ալ կ'երթաս կը տեսնես:
Ընկերս՝ Սմբատը լսել էր, մօրաքրոջս տղուն՝ Տիմիթի Արկիլոյին հետ միասին եկան, փաթթուեցանք-համբուուեցանք, նստանք խօսեցանք: Յետոյ ուրիշներ եկան խորոված պատրաստուեցաւ, չիքօֆթ շաղուեցաւ, օղին սեղանը զարդարեց երկար ժամեր կերանք-խմեցինք, այդ օր ամբողջ քէֆ ըրինք, ուշ ժամերուն եկողները սկսան երթալ իրենց տուները: Տիմիթին ըսաւ՝

- Վաղը կու գամ ձեզի Սովոր օլուք կը տանիմ, Բերկրուհի քրոջդ տունը:
- Իրենք հոս թող գան տեսնեն ձեզի,- ըսաւ Մեսրոպ քեռայրս քոյրս: Զոյրս մէջ մտաւ ըսաւ՝
- Ոչ, Մեսրոպ եղբայրս թող երթայ, հոն աւելի յարմար է:- Մեսրոպ քեռայրս համոզուեցաւ՝
- Լաւ, վաղը կ'եսօրէ ետք եկուր տար զիրենք,- ըսաւ:
- Շատ լաւ,- ըսաւ մօրաքրոջս տղան,- կ'երթամ աչքալոյս կ'ընեմ իրենց: Վաղը իրիկուան կու գամ զիրենք կը տանիմ, թէ՛ ալ Յակոբ հօրեղբայրնին կը տեսնեն հոն:

Արդէն շատ ուշ էր, մեր գլուխները լաւ քէֆ էին: Այդ գիշեր բան չկրցանք խօսիլ ինկանք պառկեցանք: Զրոջս աղջիկը՝ Լուսածինը, եօթը տարեկան էր, ըսաւ՝ «ես քեռիիս հետ պիտի պառկիմ»: Լուսածինը գրկեցի պառկեցանք: Պզտիկը շուտով քունի մտաւ, քոյրս կանչեցի, ըսի՝ «եկուր պզտիկը տեղը տար թող պառկի»:

Զոյրս կամացուկ մը գրկեց տարաւ իր անկողինը: Հազիւ դրաւ՝ Լուսածինը արթնցաւ, սկսաւ լալ՝ «ես քեռիիս գիրկը կ'ուզեմ պառկիլ»: Զոյրս ստիպուած ետ բերաւ, իմ գիրկս տուաւ: Մենք այդտեղ որքան որ մնացինք Լուսածինը իմ հետս պառկեցաւ: Զրոջս տղան՝ Չաքարը տասնչորս տարեկան էր, պարսատիկով թռչուն կ'որսար, որսը տուն բերելով կը մաքրէր կը խորովէր ինծի կ'ըսէր՝ «քեռի, կէր, իմ որսս է»:

...Տիմիթին կ'երթայ քրոջս Բերկրուհիին ականջը կը քաշէ՝ «աչքդ լոյս, վաղը եղբայրդ Պենոնը պիտի բերեմ»: Անոնք ալ մինչեւ առաւօտ աչքերնին քուն չի մտներ ուրախութենէն:

Առաւօտ կանուխ մարդիկ սկսան գալ քրոջս ու քեռայրիս՝ «աչքդ լոյս»ի համար: Զեռայրս սկսաւ հարցնել, ես ալ ամէն ինչ որ եղաւ՝ պատմեցի իրենց: Կնքահայրս, Չարուհի քոյրս, քեռայրս Տիգրանը ամէնքը մտիկ ըրին:

Շար. յաջորդ թիւով

Մանկութեանս Մէկ Չատիկը...

Սկիզբը Էջ 03

Սակայն ամենադժուարը շոքոյա չուտելու պատմութիւնն էր: Ամէն օր հաց պանիրի փոխարէն, որ սովորութիւն ունէինք Մարլէնին հետ դպրոցէն գալէ ետք տանիքը ուտել եւ շաղակրատել, հաց եւ զա՛ղար կ'ուտէինք, ձիթապտուղի կուտերը կը հաշուէինք, թէ ով աւելի կերաւ եւ ձեւով մը պահքը անցուցինք:

Աւագ ուրբաթ... Զրիստոսի թաղումէն ետք երբ ոսպով քօֆթէն ալ կ'ուտէինք, արդէն ժամանակն էր կարմիր հաւկիթ ներկելու:

-Գիտես վաղը հաղորդութենէն ետք արդէն ամէն բան կրնանք ուտել, ըսաւ Մարլէնը:

Ես շրթունքս խածի եւ գլուխս դարձուցի, որ յանկարծ չմատնէի ինքզինքս: Բայց սրտիս վրայ աննկարագրելի ծանրութիւն մը կար, սակայն ե՛րբ եւ ինչպէ՛ս ըսէի Մարլէնին, հաղորդութենէն առա՛ջ կամ ետք... Եւ ինչպէ՛ս պիտի առնէի հաղորդութիւն... Ամա՛ն Մարլէն, ուրկէ բերիր այս պահքի պատմութիւնը, մամաս ըսաւ, որ մենք դեռ պզտիկ ենք, պիտի աճինք, իսկ Մարլէնը, որ իր սրտին ուզածն ալ ըլլայ՝ ինծի ալ պահք բռնել տուաւ: Ոչ միայն նեղ էր սիրտս, այլեւ ելք մը չէի գտներ...

Չատկուայ սեղանը իր ճոխութեամբ, ձուկով եւ չամիչի փիլաւով, ապա զատկական խմորեղէններով եւ հաւկթածե շոքոյաներով ոչ մէկ նշանակութիւն ունեցաւ ինծի համար, նոյնիսկ հաւկիթ խաղալ չէի ուզեր:

Տանիքը ապրող փոքրերս ընթրիքէն ետք տուններէն դուրս կ'ելլէինք «կարմիր հաւկիթ» խաղալու: Վազեցի Մարլէնին...

-Քեզի բան մը պիտի ըսեմ...

-Ի՞նչ...

-Գիտե՛ս ես սուտ խօսեցայ... Ամէն օր, որ մարդ չտեսնէ, վերմակիս տակը գաղտնի շոքոյա կ'ուտէի... Բայց Աստուած վերմակին տակն ալ կը տեսնէ չէ՞... Կարծեցի, որ Մարլէնը պիտի բարկանար ինծի եւ սրտին փափաքը իմ պատճառովս պիտի չկատարուէր... Բայց Մարլէնը յանկարծ ամուր փաթթուեցաւ:

-Ես ալ քանի անգամ հրեական հացով «շմէնէթ» (թթուասեր) կերայ, ի՞նչ պիտի ընենք...

Չատիկ օրով մեծ մտահոգութեան մէջ ինկանք, բայց մեղքը, որ գիշերը միշտ աւելի կը ծանրանայ՝ նաեւ ելքի դուռ մը կը բանայ: Առտուն վազեցի Մարլէնին քով:

-Մարլէն, լաւ բան մը մտածեցի, մէկ շաբաթ ամէն օր դիմացս շոքոյա կ'ուտես՝ իմ սիրտս կ'ուզէ բայց չեմ ուտեր, ես ալ դիմացդ «շմէնէթ» կ'ուտեմ հրեական հացով, քու սիրտդ կ'ուզէ բայց դուն չես ուտեր... Կարծեմ Աստուած կը ներէ մեզի չէ՞...

-Եւ խօսքերնիս պիտի պահենք, միայն այն ատեն Աստուած մեզի կը ներէ...

-Վնաս չունի, այս տարի Զրիստոս մէկ շաբաթ ուշ թող Յարութիւն առնէ մեր սրտերուն մէջ... Կարեւորը առնէ:

Սիրելիներ, մանուկներու նման անկեղծ ըլլանք... Տարբեր պատճառներով ըլլայ հիւանդութիւն, աղքատութիւն կամ պատերազմ՝ թերեւս չկրնանք պահք պահել: Բայց չէ՞ որ չենք կրնար գնատուած խաբել... Չէ՞ որ Աստուած վերմակներուն տակն ալ կրնայ տեսնել, նաեւ մեր բոլոր գաղտնի արարքները, եւ... կը քննէ մեր սրտերը:

ԵՐԻՍՏՈՍ ՅԱՐԵԱԼԻ Ի ՄԵՌԵԼՈՑ...

Ամերիկայի Միացեալ Նահանգների Դեսպան Հենրի Մորգընթաուի Յուշերը Կոստանդնուպոլսոյ Մէջ Պաշտօնավարած Ատեն 1913-1916 թուականներին

ՊՕՐՈՍ ԱՐՄԵՆԱԿ ԼԱԳԻՍԵԱՆ

ԱԶԳԻ ՄԸ ՍՊԱՆՈՒՄԸ

**Հայի որդին առաջին "Յօր" ու առաջին "Մօր"
Ժամանակից ինք անբաժան է մնացել այն երկրից
Ուր բնակում էր մարդկության նախաստեղծ զոյգը:
Բաֆֆի**

1895 –ի եւ յետագայ ջարդերի տարիներին հայերին արգիւլում էր բանակ զինուորագրուիլը, նրանց թոյլատրուած չէր զէնք կրել: 1908 թուականին, "Երիտ Թուրքեր"-ի իշխանութիւն գալուց յետոյ, Թուրքիայում փոխուել էր կացութիւնը: 1915 թուականին, Թուրքիայի ամեն քաղաքում հազարաւոր հայեր կային, որոնք զինուած էին հրազեններով ու պատերազմական այլ սարքերով: Վանի ինքնապաշտպանութեան կռուում հայերը զէնք էին ձօնել թուրքին, ոչ միայն հերոսական դիմադրութիւն ցոյց տուել դուշմանին, այլեւ յաղթանակի դրօշ պարզել ոստանի ամրոցի բարձունքին: Թուրքը գիտակցել էր, որ հայկական ջարդերը հաւանական պայքարի բնոյթ կարող էին ստանալ: Հայ ցեղի ծրագրուած բնաջնջումը կարողանալ իրականացնելու համար, թուրքին անհրաժեշտ էր անկարողութեան մատնել Հայ կռուող ուժին, հաւաքել հայկական շէների ու քաղաքների բնակչութեան զէնքերը եւ պաշտպանական այլ միջոցները:



1915 . . . թրքական բանակի Հայ զինուորները նոր կանոնակարգի էին ենթարկուել, նրանք թէւ կանոնաւոր բանակի կռուող զինուորներ էին, սակայն նրանցից վերցուել էին զէնքերը, վերածուել ճամբաներ շինողների ու նոյնիսկ գրաստ քաշողների: Ուղեկցող թուրք զինուորի խարազանի տակ, զինուորական ծանր պիտոյքներն էին իրենց ուսերով կրել, մինչեւ իրենց մարմինների կէտը ձիւնին մէջ թաղուելով՝ լեռներում ճամբայ բացել իրենց երթի համար: Որպէս սնունդ թափափուքներ էին տուել նրանց, վերցրել նրանցից ինչ որ ունէին՝ նոյնիսկ հագուստները: Գիշերներին չոր, թաց գետնին էին պարկում, հսկիչները նրանց խարազանում էին, որ անկարող լինէին քնել: Մինչեւ սահմանեալ տեղը հասնէին մեռնում էին Հայկական շէների հողի մշակները, քաղաքների հասուն տղաները, որոնք "Ինչէր ասես չէին անի", եթէ իրենց կանանց, քոյրերի, փոքրերի համար կռուի տանէին նրանց տանուտերերը, եկեղեցու սպասաւորները, այդ ի՞նչ արեցիք հայ մեծեր, պատերազմի էր ելել թուրքը, դուք էլ՝ թաքստոցներում պահած հին թէ նոր զէնքերով նրա՝ դէմ պատերազմի դուրս գայիք: Թուրքը կարո՞ղ էր երկու ճակատով կռիւ տալ: 50-100 հոգիներով զինուորների խումբեր էին հաւաքում, նրանց չորս-չորս իրար կապելով, տանում էին հեռու մի տեղ . . . գնդակահարում: Մահացածների մարմինները թաղելու եկած մարդիկ նրանց մերկ էին գտնում, թուրքերը իրենց սովորութեան համաձայն կողոպտում էին սպաննուածների հագուստները: Մորգընթաուն գրում էր Նաեւ, որ իրենց գոհերին սպաննելուց առաջ՝ նրանց գերեզմաններն էին իրենց փորել տալիս: Բանակ հաւաքագրուածներից ոմանք յաջողել էին փախուստ տալ գորանոցներից, միանալ կռուող Հայերի խումբերին: Նաեւ Մուսա Լեռան շէներից զինուորագրուածներ փախել էին գորանոցներից, ելել լեռան կռուի: Մորգընթաուն յիշատակում է՝ Ամերիկեան հիւպատոսների տեղեկագիրներից մի դրուագ, որ Յուլիսի սկիզբները, բանուորի աշխատանքի իջեցուած 2000 Հայ զինուորներ, Խարբերդից ուղեւորուել էին ճամբաների շինութեան: Քաղաքի կուսակալը յայտարարել, որ նրանց չարիք պիտի չպատճառուէր, դիմել գերման միսիոնարին հանդարտեցնելու նրանց: Միսիոնարը հաւատաքցել էր կուսակալին, հանդարտութեան կոչ էր ուղղել ժողովուրդին: Բնաջնջ էին արել նրանց՝ մարմինները հասարակաց փոսի մէջ նետել: Սակաւ մարդիկ էին յաջողել փախչել, շրջանում տարածել ջարդերի լուրը: Մի քանի օրեր յետոյ նոյն կերպ Տիարաբէքի էին դրկուել 2000 բանուորի աստիճանի իջեցուած զինուորներ, նրանց ընդիմութիւնը կամ փախուստը անկարելի դարձնելու

համար՝ լերկ դաշտեր էին քշել նրանց, որոնք անօթի մնալով մեռնում էին: Տարագիրներից առաջ ճամբայ ելած կառավարական գործակալներ, քիւրտերին տեղեկացնում կարաւանին մօտենալը, պատուիրում էին կատարել իրենց "պարտականութիւնը": Ոչ միայն աւագակաբարոյ քուրտ տղամարդիկ էին լեռներից իջնում անցնող կարաւանների վրայ, այլ նաեւ մսագործի դասակներով զինուած նրանց կանայք, վայելելու համար իրենց **"յաչս Ալլահին Զրիստոնեայ մը սպանած ըլլալու արժանիքը"**:

Ըստ Մորգընթաուի, այդ ջարդերը առանձին դէպքեր չէին, ինք կարող էր ուրիշներ էլ յիշատակել այնքան զարհուրելի, որքան իր պատմածները: Եւ որ Օսմանեան կայսրութիւնում կանոնակարգուած դրութիւն էր ի գործ դրուած՝ ոչնչացնել բոլոր Հայ քաջամտոյց այրերը, որոնք կարող լինէին մի նոր սերունդի ծնունդ տալ, որից յետոյ ազգաբնակչութեան տկար մասը դիւրին պիտի լինէր բնաջնջել:

Ինչքան որ ահաւոր եղած լինէին զինուորագրուածների ջարդերը, նրանք ողորմութիւն էին բաղդատելով այն վարմունքին, որոնք պիտի ենթարկուէին զէնք պահած կասկածուող հայերը: Գիւղական վայրերում, քաղաքներում փակցուած որմազդերը ծանուցում էին՝ քրիստոնեաները իրենց զէնքերը սպայակոյտի կեդրոններ բերէին: Տազնապել էին հայերը, այդ հրամանը միայն իրենց համար էր եղել: Հայը հնազանդեց, թուրքը հրճուագին տիրացաւ նրանց յանձնած կարապիւններին, որոնց համար ապացոյց համարուեց, որ նրանք "յեղափոխութիւն" էին ծրագրած եղել:

Չէնք յանձնողներին կամ կասկածեալներին ամբաստանում էին դաւաճանութեան մէջ: Հազարաւորներ զէնք չէին յանձնել, որովհետեւ զէնք չէին ունեցել: Ուրիշ շատեր զէնք չէին յանձնել ոչ թէ ապստամբելու համար, այլ իրենց կեանքը ու կանանց պատիւը պաշտպանելու համար, ինչպէս Մուսա Լեռան պատուելի Տիգրան Անդրեասեանը գրել էր աշխարհին ուղղուած իր պատգամի մէջ, որ կռուի էին ելել՝ նաեւ իրենց կանանց պատուի համար: Մորգընթաուն պիտի գրէր՝ "Այն չարչարանները, որոնց ենթարկուեցան այդ ըմբոստները, կը կազմեն ժամանակակից պատմութեան ամենէն զգուշի արարներէն մէկը": Մարդիկ կարծել էին, որ մարմնական չարչարանքը արդէն դադրած էր եղել որպէս վարչական ու դատական պատիժ լինելու: Ամենէն բարբարոսներն էլ չէին կարող ներկայացնել անելի զարհուրելի տեսարաններ, քան տեղի էին ունենում ամբողջ Թուրքիայում: Թուրք ոստիկանները պահուած զէնքեր փնտռելու պատրուակով կողոպտում էին եկեղեցիները, պղծում խորաններ ու սրբազան իրերը: Ուշակորոյս աստիճանի ծեծում էին քահանաները, նրանց մեղադրում էին խռովութիւններ քաջալերելուն: Չէնք ունենալու մեղադրանքով զինում էին եկեղեցականները, նրանց տանում պատերազմական խորհուրդի առջեւ, նրանց տանում էին փողոցներով, թուրք ամբոխը գրգռելու համար:

Ոստիկանները վատ էին վարուել նաեւ կիներու հանդէպ, զէնք թաքցնելու ամբաստանութեամբ հանում նրանց հագուստները՝ խարազանում ծառերի թարմ ճիւղերով, նոյնիսկ մայրանալու պատրաստ կանանց: Բռնապղծութիւնները խուզարկութիւնների հետ այնքան բազմաթիւ էին, որ ոստիկանների մօտենալուն՝ կանայք ու աղջիկներ փախչում լեռներ, անտառներ:

Ձերբակալում ու բանտարկում էին գիւղերի ու քաղաքների կայտառ մարդիկ: Բանտերի դահիճներ գեհեմային արարքներով նրանց ստիպում յայտարարելու, որ իրենք "յեղափոխականներ" էին եւ իրենց զէնքերուն պահած տեղերը յայտնում էին: Նրանց չարչարանքները սկսւում էին գանակոծութեամբ, դահիճը բարակ գաւազանով հարուածում էր գոհի գարշապարներին: Մորգընթաուն գրում, որ այդ ցաւը սկզբում սաստիկ չէր, սակայն երբ այն շարունակուէր ցաւը սարսափելի էր լինում՝ մկանները ուռում ու ճեղքւում էին: Ոստիկանները, նրանց նման չարչարանքների էին ենթարկում մինչեւ նուաղէին, երեսներին ջուր թափելով զարթեցնում ու շարունակում նոյնը: Եթէ խօսել յաջողեցնէին, փրցնում էին նրանց յօնքերը, մօրուքը, եղունգները, կարմրած երկաթ էին դնում լանջերին, միսերը քաշում կարմիր-կրակ աքցաններով, եռացած կարագ լեցնում վերքերին: Երբեմն էլ ոստիկանները նրանց ոտքերը ու ձեռքերը զամում էին փայտե տախտակների վրայ, նմանացնելով Յիսուսի խաչելութեանը: Հազարաւոր նման դէպքերում մերժել էին զէնք յանձնել . . . որովհետեւ չունէին: Ոստիկանների իրենց բնակավայրեր մօտենալուն, նրանց զէնք յանձնելու համար դրացի թուրքերից գնում, խուսափելու համար նման չարչարանքներից: Մորգընթաուն-ն շարունակում գրել, որ հրաժարում է ներկայացնել նման բազմաթիւ ուրիշ դէպքեր եւս՝ այն զարհուրելի է:

Մորգընթաուն Պետրի պէյի հետ խօսել էր իրենց այդ գործելակերպի մասին: Թուրքը հաճոյքով էր նկարագրել նման չարչարանքները: Նա խոստովանել էր, որ այն թելադրողը կառավարութիւնն էր եւ որ նման գործելակերպ իրականացնելու մասին խօսուել էր "Միութիւն ու Յառաջդիմութիւն" կոմիտէի հաւաքոյթներում: Չարչարանքի ամեն նոր գործելակերպ ողջոյնում էր, ճիգ էին թափում նման մարմնական չարչարանքներ որդեգրելու: Թուրք պէյը չէր հաղորդել անունը այն պաշտօնեայ մարդու, որ պարգել էր շահել առաւել սարսափելի չարչարանքի գործելակերպի համար:

Ամերիկայի Միացեալ Նահանգների Դեսպան...

Սկիզբը էջ 06

Վանայ գաւառի կուսակալ Ճեւտեթը-ը նշանաւոր էր դահիճների ամենա "համբաւորը" լինելու, նրան տրուել էր "Պաշգալի ոճրագործը" ծաղրամակդիրը, որովհետեւ անգթութեան այդ "մասնագետը" չարչարանքի "գլուխ-գործոց" կերպ էր հնարել՝ "ծիւղ պայտեր գամել իր զոհերուն ոտքերուն":

Մորգընթաու-ն շարունակում է, որ թուրքերի այդ գործելակերպը չէր բովանդակել այն բոլոր խժոժութիւնները, որ ժամանակի լրագրերը անուանում էին՝ "Հայկական խժոժութիւններ", անոնք Հայկական ցեղի բնաջնջման նախատրաստական գործողութիւններն էին: Գահընկեց արուած Սուլթան Ապտիւլ Համիտի հրամանն էր եղել՝ "սպանել, սպանել", իսկ օսմանեան ժողովրդապետութիւնը նոր ծրագիր էր որդեգրել՝ փոխանակ հայ ազգը տեղում լիովին ջարդելու:

... այն տարագրել: Կայսրութեան հարաւային եւ հարաւ-արեւելեան մարզում գտնուում էին սուրիական անապատը ու Միջագետքի հովիտը: Այդ տարածութեան առանձին մասերում, հազար-հազար տարիներ առաջ աշխարհի ծաղկեալ հին քաղաքակրթութիւնների, Արմինների՝ Արատտա-Արմանի-Արմինա-Միտաննի պետական միաւորների եւ Սումեր-Շումեր, Բաբելոն, Ասորեստան, Պարսկաստան, Մարաստան (ներկայ Ազրայեջանի տարածք) պետութիւնների որոշ տարածքների մաս էին կազմել: Թուրքերի տիրապետութեան վեց դարերից յետոյ, անմշակ, տխուր, լքեալ, առանց քաղաքի ու աւանի, առանց սիրուելի լինելու մարզ էր ներկայացնում, բնակուած մի քանի վայրերի ու մոլեռանդ Պետեւի ցեղախումբերից եւ միայն տարիների անխոնջ աշխատանքը կարող էր մարդու համար այն բնակելի վայրի փոխակերպել:

Իշխող կառավարութեան գլխաւորները յայտարարում էին, որ կայսրութիւնում բնակող երկու միլիոն ու անելի հայերին ամայի եւ հիւրամերժ այդ երկրամասը դրկել: Այդ կարգադրութիւնը, ըստ Մորգընթաուի իբր՝ "բարեմտութեամբ որոշուած", արդէն ներկայացնում էր անգթութեան եւ անարդարութեան գերազանցութիւնը: Ըստ նրան, հայերը մեծ մասով երկրագործներ չէին, նրանք առեւտրական ու ճարտարարուեստական բնագաւառների մարդիկ էին: Թէեւ հայերից շատեր ազարակապանութեամբ էին զբաղւում եւ շատեր էլ քաղաքներում ու աւաններում բնակուելով, կազմում էին երկրին տնտեսական ներուժը: Հայ ժողովուրդը հազարներով հաւաքել ու դրկել ամենէն ամուլ մի մարզ, ամենէն անելի անմարդկային արարքներից մէկը պիտի լինէր: Սակայն թուրքերը չէին մտադրուել հայերին այնտեղ հաստատելու: Նրանք վստահ էին, որ նրանց ամենամեծ մասը իրենց սահմանուած տեղը պիտի չհասնէին: Ըստ նրան, տարագրութեան նպատակն էր գողութիւնը եւ քանդումը, որը բնաջնջումի նոր գործելակերպ էր: Օսմանեան իշխանութիւնների տարագրութեան հրամանը, ամբողջ մի ցեղի մահուան վճիռն էր, նրանք շատ լաւ էին գիտակցում այդ, իրեն հետ նրանց խօսակցութիւնների ընթացքին՝ երբեք չէին ջանում թաքցնել այդ:

1915 թուականի գարնան ու ամռան, տարիանումի ընթացքը շարունակւում էր, միայն մեծ քաղաքներ՝ Պոլիսը, Իզմիրը եւ Հալէպը գերծ էին մնացել, միւս բոլոր վայրերը, նոյնիսկ միայն մէկ ընտանիք բնակուող վայրերում, թատերաբեմ հանդիսացան այդ "աննկարագրելի ողբերգութիւններուն": Միայն

շատ քիչ շէներ "տիրոջը" չէին հնազանդել, չէին յանձնել զենքեր, կռուի ելել դուշմանի դէմ, ոչ թէ կարաւան եղած ճանապարհներին, անապատների աւազուտներում մահ գտնելու, կռուի էին ելել մահ պատճառելու դուշմանին, կամ քաջին վայել կռուում դիմակայել մահը: Արմին-Հայեր, հիմա պարծանքով են յիշատակում՝ Սասունի, Վանի, Մուսա Լեռան, Վասպուրական Շատախի, Շապին Գարահիսարի, Չէլթոնի, Հաճընի, Այնթապի, Եղեւիայի եւ այլ մի քանի շէների քաջերի կոչը: Հայոց Մեծ բանաստեղծ Եղիշէ Զարեկը գրել է՝ **"Աշխարհն առողջ, լիարին ազգերի հետ է հաշուի նստում եւ ոչ՝ հանճարեղ ու տանուլ տուած դժբախտների":**

Մի շարք գիւղերում որմագդեր էին փակցուել, հրաւիրել գիւղի ամբողջ մարդկանց, մէկ կամ երկու օր յետոյ, նշուած ժամին, ներկայանալ ծանուցուող վայրեր: Որոշ դէպքերում մունետիկը փողոցներն էր պտղտում բերանացի կատարելու հրահանգները: Որտեղ որ ազդարարութիւն չէր եղած, ոստիկաններ մտնում տներ, հրամայում տան բնակիչներին հետեւել իրենց, տղաներին դպրոցներից վերցնում, որոնց գրքերը օրուայ դասի վրայ բաց էին մնում, հոռուվելներով հողը ակօսող մշակներ, լծկան եզների մաճերը թողած, շտապ վերադառնում տուն: Նրանք նախ ընկնում էին կանանց վրայ, "ինչպէս Վեսուլ հրաբուխը յանկարծակի բերաւ Բոմբէյը", ցորեանի հացն էին թողնում փուռերում, չէին խնայել նոր մայրացած կանանց, նրանց բռնադատում վեր կենալ անկողիններից, մանչերը գրկերնին հետեւել էին կարաւանին, պիտի գրէր Մորգընթաու: Դողում է ձեռքս, դողում է հոգիս, դողում է մարմինս, դողում է գրիչս, ես որպէս լեռնական Արմին-Հայ, ինչպէս թղթին յանձնեմ այն ամենը, ինչ որ նկարագրել էր Մորգընթաու: Դու, արարչական Արմին-Հայ, ընդվզումով, հոգու տուայտանքով շատ ես ընթերցել քու ցեղի մարդկանց եղեռնագործութեան մասին, դու ինքդ երեւակայի թէ ինչպիսի ցաւ կարող էր իր նմանին պատճառել՝ գազանային բնազդից "նոր մարդու" քաղաքակրթ լիճակին դեռ չհասած տմարդի թուրքը: Ներող եղիր, սակայն "կորցնել յիշողութիւնը, մոռանալ անցեալը, ինքնութիւնդ կորցնելն է" պիտի գրէր տաղանդաւոր արծակագիր՝ Կարէն Խաչատրեան-Խաչկարը: Մորգընթաու, Հրեայ ազգի զաւակ, ճշմարտութեան լոյսի կանթեղը վեր պահած, առանց որեւէ շահադիտական նպատակի, աշխարհին պատմեց մի ցեղի կործանման ողբերգութիւնը: Մարդկային ազնուագոյն առաքինութիւններով ՄԱՐԴ, ինչպիսի հոգեկան տուայտանքով հաղորդում մարդու տառապանքը, հարազատի նման նկարագրում օտար մարդկանց ցաւը, խորունկ ցաւի զգացումով՝ ցաւում մարդու կողմից մարդուն պատճառուած ցաւը: Մարդու հանդէպ պատճառուած ցաւի դէպքերի նկարագրութիւնը երբեմն դադարեցնում է գրել, ասելով, որ այլեւս անկարող է այն շարունակել: Աշխարհին կանչում, այնտեղ՝ արեւի լոյսով ողորդուն "Եղեմի, առաջին մարդու՝ Եվայի ու Ադամի" երկրում Եղեմն է, իր յուշերը եղերեղ է, Արմին-Հայ ցեղի արարման լոյսի ու նրա ոչնչացման պատմութեան ամենա ահռելի գեղեցիկը: Այդ ցեղի դուշման թուրքին նկարագրում որպէս աւազակաբարոյ, անբարոյ մարդիկ, որոնք հրճում էին մարդ տանջելու հաճոյքից, մարդիկ՝ որոնց հոգիներում Աստուած գութ, ցաւ զգալու առաքինութիւն չէր հոսել:

Կլենտել

ԲԱՆ ՈՒ ԳԻՐ

Ձեռքեր

Դուք՝ քրտնաթոր, տանջուած ձեռքեր, Արեգակից խանձուած ձեռքեր, Ձեռքեր՝ բքից, շոգից ճաքած, Դուք, որ հողից քամում բերքեր, Ցաւն էք անգամ դարձնում երգեր՝ Վիատութեան դուռը փակած:

Դուք, որ հանքից քար էք հանում, Որ ծակծակուում կար էք անում, Տապակում էք՝ հալում մետաղ, Եւ, հոգնատանջ, դառնալով տուն, Մէկով թոռին, մէկով որդուն Պիտի գրկելով՝ ասում «մատա՛ղ»:

Դուք, որ երեկ բռնել էք զենք, Դուք, որ այսօր շինում էք շէնք, Կամուրջ գցում, կապում կամար. Որ քիչ վերցնում, շատ էք դնում, Շատ էք տալիս, քիչ ստանում՝ Հասկանալով ինչի համար:

Դուք, որ մթնում լոյս էք փռում, Որ խրախոյս, յոյս էք փռում, Ձեռքեր, ձեռքեր ժողովրդի, Դուք՝ ստեղծող, ճարտար՝ ձեռքեր, Դուք՝ չկեղծող, արդար՝ ձեռքեր, Ձեզ է երգում ձեր խորթ որդին՝

Ակնածանքով՝ ձեռքը սրտին, Մեծարանքով՝ երգը շրթին...


Պ. ՍԵԼԱԿ

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՕՐԱՅՈՅՑ

21 2022
ԱՊՐԻԼ

Կրկ երկ երեք զրոյ Հնգ Ուրբ Շբո

					1	2
3	4	5	6	7	8	9
10	11	12	13	14	15	16
17	18	19	20	21	22	23
24	25	26	27	28	29	30



ՌՈՊԵՐԹ ԷԼԻԲԵԿԵԱՆ
(1941)

«Նկարիչի արուեստանոցին մէջ»



Մերձադուր Արեւելքի Հայ Աւետարանական Եկեղեցիներու Միութիւն

ՄԻԱՅՅԵԱԼ ՊԱՇՏԱՄՈՒՆՔ
ՆՈՒԻՐՈՒԱԾ
ԱՊՐԻԼԵԱՆ ՆԱՀԱՏԱԿՆԵՐՈՒՆ

Կիրակի, 24 Ապրիլ 2022, կ.ե. ժամը 12.30ին
Հայ Աւետարանական Եկեղեցի, Նոր Մարաշ



Հայ Կաթողիկէ Պատրիարքարան
ՅԻՇԱՏԱԿ ԱՊՐԻԼԵԱՆ
ՆԱՀԱՏԱԿՆԵՐՈՒՆ

ՀԱԿՈՒՄ

Շաբաթ, 23 Ապրիլ 2022-ին, երեկոյեան ժամը 8:00-ին,
Հայ Կաթողիկէ Պատրիարքարանի Նահատակաց
Յուշակոթողին շուրջ - Ժեիթաուի:

ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ

Նախագահութեամբ՝
Ն.Ա.Գ.Տ.Տ. ՌԱՖԱՅԷԼ ՊԵՏՐՈՍ ԻԱ.
Կաթողիկոս Պատրիարքին Տանն Կիլիկիոյ Կաթողիկէ Հայոց

Կիրակի, 24 Ապրիլ 2022-ին, երեկոյեան ժամը 5:00-ին,
«Ս. Գրիգոր Լուսաւորիչ» ճեմարանի բակին մէջ, Ժեիթաուի:

Մասնակցութեամբ Հայ Կաթողիկէ ժողովրդապետութիւններուն,
միութիւններուն եւ վարժարաններուն:

Յաւարտ Ս. Պատարագի, հանդիսաւոր թափօրը կ'ուղղուի դէպի պատրիարքարանի
բակը, ուր Նահատակաց Յուշակոթողին առջեւ պիտի կատարուի աղօթք:

Փոխադրակազմեր տրամդրուած պիտի ըլլան հետեւեալ կեդրոններուն մէջ կ.ե. 4:00-ին՝
Մեսրոպեան Բարձրագոյն Վարժարան (Պուրճ Համուտ)
Սուրբ Խաչ Հարպոյեան Բարձրագոյն Վարժարան (Չալքա)
Միխիթարեան Հայրերու Վարժարան (Ռաուտա)
Ժողովրդային Տուններ - Լէյլաւան (Ֆանար)

Հայ ժողովուրդը հրաւիրուած է
յարգանքի տուրքը մատուցանելու մեր բոլոր Նահատակներուն:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՍՐԲՈՑ ՆԱՀԱՏԱԿԱՑ ՈԳԵԿՈՉՈՒՄ ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԱՅՐԱՎԱՆՔԻՆ ՄԷՋ

Կիրակի, 24 Ապրիլ 2022-ին, Անթիլիասի Մայրավանքի Ս. Գրիգոր
Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ Ս. Եւ Անմահ Պատարագի
մատուցմամբ պիտի ոգեկոչուի Հայոց Ցեղասպանութեան
սրբացեալ Նահատակներուն յիշատակը՝

Նախագահութեամբ
Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ՎԵՐԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

պիտի պատարագէ
ԳԵՐՇ. Տ. ՇԱՀԷ ԱՐՔ. ՓԱՆՈՍԵԱՆ
(Առաջնորդ Լիբանանի հայոց թեմի)

Յայտնենք, որ երեք կուսակցութեանց կազմակերպութեամբ
առաւօտուն քայլարշաւ տեղի պիտի ունենայ՝ Պուրճ Համուտէն դէպի
Անթիլիասի Մայրավանք, ուր Սրբոց Նահատակաց Յուշարձան-
մատարան առջեւ տեղի պիտի ունենայ սրբոց Նահատակաց
բարեխօսական կարգ եւ ապա Վեհափառ Հայրապետը մեր
ժողովուրդի զաւակներուն պիտի ուղղէ իր Հայրապետական
պատգամը:

Ուստի, կոչ կ'ուղղենք մեր ժողովուրդի զաւակներուն, մասնակցելու
եկեղեցական արարողութեան ու ժողովրդային քայլարշաւին եւ
իրենց արժանի յարգանքը ընծայելու մեր բիրաւոր Նահատակներուն
անմահ յիշատակին, ինչպէս նաեւ զօրավիգ կանգնելու անոնց
Նուիրական դատին:

ԴԻԲԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ՀԲԸՄ- ՀԵԸ «ԱՐԻՆ» ՊԱՐԱԽՈՒՄԲ

ՀԲԸՄ-ՀԵԸ-ի «ԱՐԻՆ» ՊԱՐԱԽՈՒՄԲԸ
ԿԸ ՎԵՐՍԿՍԻ ԻՐ ՓՈՐՁԵՐՈՒՆ



Ուրբաթ, 29 Ապրիլ 2022-ի երեկոյեան, ՀԲԸՄ-ՀԵԸ-ի «Արին»
պարախումբի վարչութիւնը, Նոր պարուստոյց Ժիրայր Զեչեճեանը
հանդիպում մը պիտի ունենան պարախումբի անդամներուն
եւ անոնց ծնողներուն հետ, ՀԲԸՄ-ի Տեմիրճեան կեդրոնի 5-րդ
յարկին մէջ:

Ժամը՝ 5.30-Էն 7.30՝ 5-15 փոքրեր եւ պատանիներ
Ժամը՝ 7.30-Էն 8.30՝ երեցներ

ՆՈՐ ՎԵՐԵԼՔՆԵՐՈՒ ՀԵՌԱՆԿԱՐՈՎ՝
ՀԲԸՄ- ՀԵԸ «Արին» Պարախումբի Վարչութիւն

Դաւանելով ռամկավար եւ ազատական սկզբունքներ, կը հաւատանք
բազմակարծութեան եւ ազատ խօսքի իրաւունքի: Հետեւաբար՝
թերթիս մէջ հրատարակուած գրութիւնները անպայման չեն
արտայայտեր խմբագրութեան տեսակէտը: Կամքէ անկախ սպորադ
վրիպակներու պարագային, կ'ապաւինին յօդուածագիրներուն եւ
մեր ընթերցողներուն Ներողամտութեան: